# Կրթական միջավայրում ճգնաժամային իրավիճակներին արդյունավետ արձագանքման փուլեր

Կրթական համակարգերում ճգնաժամային միջամտությունը հնարավորություն է տալիս նվազեցնել բացասական իրավիճակների ազդեցությունը ինչպես գլոբալ կրթական համակարգի, այնպես էլ մեկ սովորողի մակարդակում: Կրթական միջավայրում ճգնաժամային իրավիճակներին արդյունավետ արձագանքման փուլերն են.

| | |
|---|---|
| **Կանխարգելում** | Դպրոցները պետք է ունենան ճգնաժամային իրավիճակների կանխարգելման, սովորողների ապահովության և անվտանգության հստակ ռազմավարություններ |
| **Նախապատրաստում** | Կրթական հաստատությունները ճգնաժամերի դեպքում պետք է տրամադրեն անհապաղ, տեղին և ժամանակին աջակցություն, որն իրականացնում են.<br>• Նախնական պլանավորման<br>• Համագործակցությունների ձևավորման<br>• Պարբերաբար վերանայվող ճգնաժամային պլանավորման<br>• Անձնակազմի մշտական վերապատրաստման<br>• ԱՀՕ տրամադրման սկզբունքների իմացության միջոցով |
| **Արձագանքում** | Ճիշտ իրականացված բոլոր քայլերը հնարավորություն են տալիս նվազեցնել արտակարգ իրավիճակի ազդեցությամբ պայմանավորված հնարավոր բարդացումների հավանականությունը: Արձագանքման փուլում կրթական կառույցը հստակ հետևում է նախապես սահմանված պլանին և ԱՀՕ հիմնական սկզբունքներին: Թեև ճգնաժամային իրավիճակը ենթադրում է անկանխատեսելի հետևանքներ, միևնույն է արձագանքման հստակ ձևերը հնարավոր են դարձնում անվտանգ պայմանների հասանելիության ստեղծումը: |

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

| | |
|---|---|
| **Վերականգնում** | Անհարաժեշտ է իրականացնել հատուկ քայլեր ճգնաժամային իրավիճակից հետո սովորողներին, նրանց ծնողներին և մանկավարժական անձնակազմին աջակցելու համար: Այս փուլում իրականացվում է հոգեբանական և ֆիզիկական վնասի գնահատում և դրան համապատասխան աջակցության կազմակերպում: Ճգնաժամային իրավիճակի վաղ փուլերը սովորաբար ամենաարդյունավետն են լինում ԱՀՕ տրամադրման համար, որից հետո անհրաժեշտ է լինում պլանավորել երկարատև աջակցությունը: |

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: